Արձանագրություն N 3
ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29 նոյեմբերի 2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը, Ն. Մանուկյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Մասնակիցների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Այրում և Հաղթանակ բնակավայրերի տարածքներում Դեբեդ գետի հունի մաքրման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն և «Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ն՝ գնահատող հանձնաժողովի 23.10.2025 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն և «Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով (այդ թվում շտկմամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բադալյան
անդամներ	_____	Կ. Ալեյան
	_____	Կ. Սարգսյան
	_____	Ն. Մանուկյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան